589. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ.

Հոգևոր հարք և եղբարք, զՍողոմոն երայց (երէց), կանգնող խաչիս յաղաւթս յիշեսջիք աղաչեմ. ամէն:

Հրատ. Բարխուդարեանց, 90—91։

Հին Ներքին Թաղավարդ

***590. ԿԻՍԱՎԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ** հարավային (առաջինը բեմի կողմից) որմնամույթի ստորին մասում երկու մետրաչափ մի երեսպատման քարի վրա խաչ և տակին 3 տող.*

ԱՅՍ Է ՍԲ ԽԱՉՍ
ԴԱՒՈՒԹԻՆ
ԹՎ ՌԾԷ

ԱՅՍ Է ՍԲ. ԽԱՉՍ| ԴԱՒՈՒԹԻՆ|. ԹՎ. :ՌԾԷ: (1608):

***591. ԿԻՍԱՎԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ** հյուսիսային պատին, ներքուստ, բեմի մոտ, մի երեսպատման քարի վրա, 2 տող.*

ԹՎԻՆ
ՌՂԴ

ԹՎ.ԻՆ| :ՌՂԴ: (1645):

***592. ԽԱՉՔԱՐ,** ագուցված է նախորդ արձանագրությունից ներքև, վրան՝ թերի 2 տող.*

...ՄԱՐՏԻՐՈՍԿԱՆԿՆԵՅԻԽՉՓՐԿ···
ԹԻԱԿՆ·····

⌈ԵՍ⌉ ՄԱՐՏԻՐՈՍ ԿԱՆԿՆԵՑԻ Խ⌊Ա⌋Չ⌊Ս⌋,
ՓՐԿ⌈ՈՒԹԵԱՆ . . . . . . | ԹԻԱԿԱ-
Ն⌈Ի⌉Ն . . . . .

***593. ԿԻՍԱՎԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ** մուտքի մոտ, մի քարի վրա եղել է.*

Ես անարժան Գրիգորս շինեցի Թաղավարդու եկեղեցին. առաջնորդութեան Տաւութին որդին, նոր Պապասին, Ամիրպէկին. այնպէս սէրուն էր, որ գիշերն քուն չկէ:

Հրատ. Բարխուդարեանց, 89։

55. ՇԵԽԵՐ ԳՑՈՒՂ

***594. ՄԱՏՈՒՌԻ ՎՐԱ,** որը գտնվում է գյուղի հարավային բլրի վրա.*

թվին, ։ՌԾԲ: (1603):

Հրատ. Բարխուդարեանց, 87։

56. ԱՄԱՐԱՍԻ ՎԱՆՔ

Արցախի այս հնագույն և նշանավոր վանքի հիմնարկությունը ավանդաբար վերագրվում է Գրիգոր Լուսավորչին, իսկ ավարտումը և օծումը՝ նրա թոռ, Աղվանից առաջյալ Գրիգորիսին։ Վերջինիս նահատակումից հետո նրա աշակերտները Գրիգորիսի աճյունը թաղում են հենց այս վանքում։

Մեկուկես հազարամյակի անցյալ ունեցող այս վանքը ականատես է եղել պատմական խոշոր իրադարձությունների, ունեցել է իր ծաղկման շրջանը, երբ այնտեղ են նստել Աղվանից կաթողիկոսները, կրել է նաև աղետներ ու ավերածություններ և հետագայում մնացել անմարդաբնակ։